

որ ի 1781 թուականին կառուցեալ է, ունի մի քահանայ, եւ 23 տունէ կբաղկանան (60 անձինք արական սեռէ եւ 37 իգական սեռէ - ամենն 97 հոգիք) : Սորա ամենքը եւս յաջողակ առեւտուրով եւ գործով զբաղուած են, եւ գրեթէ ամեն արուեստի մէջ բաժին եւ կարողութիւն ունին : Կարոյ չունին, որոյ համար կարգադրութիւն եղած է, բայց ոմանց հարքն եւ ոմանց մարքն մեծ խնամքով Հայերէն լեզուն եւ ընթերցանութիւնը եւ այլն կաւանդեն եւ կուսուցանեն իւրեանց որդւոց, եւ ըստ բաւականին բարենախանձ են եղած՝ ինչպէս մեր թղթակիցն կհաղորդէ : Իսկ հանրական գաստիարակութիւնը Անգղիացւոց վարժարաններում կստանան եղել :

Երբ ծովային ձանապարհորդութիւնն բարեխառն եղանակներով կներէ, Գրիգորիս Արքեպիսկոպոսն պիտի այցելէ ի Բթաւիա՝ տեղւոյն մեր սիրելի եղբարքը եւս մխիթարելոյ համար՝ ինչպէս նաեւ հետզհետէ ուրիշ տեղեր եւս պիտի երթայ, որոց համար եւս ի ժամանակին կարեւոր տեղեկութիւնքը պիտի տամք ամսագրոյս միջոցաւ :

Գրիգորիս Արքեպիսկոպոսի ի Հնդկաստան կատարած այցելութիւնքն՝ Ասպահանայ վիճակին եւ գպրոցաց համար եւս ոչ սակաւ բարեպատեհ միջոցներ եւ յոյսեր պիտի ընծայեն՝ որոց հաւատարիմ նշանքն սկսած են արդէն երեւիլ :

Թէեւ նորին Գերապատուութիւնն բաւական զբաղմունք եւ ծանր գործեր ունի ի Հնդկաստան, բայց կյուսամք որ իւր բարձիր փութաջանութեամբ եւ

յաջողակութեամբն շուտով պիտի յաջողի աւարտել եւ վերագառնալ յԱսպահան՝ չնայելով որ՝ Հնդկաստանի մեր սիրելի եղբարք եւս չկամին թողուլ իւրեանց սիրելի Առաջնորդը՝ որ շուտով վերագառնայ, որոյ համար անհրաժեշտ խօսելիք ունիմք ի բարեպատեհ ժամանակի՝ մի քանի դաւաճաններուն եւս կարեւոր խրատներ ուղղելով եւ կրկին ի զգուշութիւն հրաւիրելով :

Հ Ա Ղ Ի Ի

ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ԱԳՔՏԱՆՈՅԻՆ ԳՐԱՊԱՐԵԱՆ

Մոսկւայի Հայոց Գասպարեան Աղքատանոցի Խորհրդարանն՝ ըստ սովորականին՝ նոյն հաստատութեան 1875 ամի ելեւմտից հաշիւը թէ ընդարձակ հաշուեկշռով եւ թէ ի յայտարարութեանն համառօտ բովանդակութեամբ եւ բացատրութեամբ ամփոփելով ներկայացոյց Վեհ. Հայրապետի Ազգիս, եւ մեք յայտարարութենէն հետեւեալները քաղելով արժան կհամարիմք հաղորդել ի գիտութիւն մերազնէից :

Ա. — Յամին 1875 ընակէն Աղքատանոցի անձինք ինն՝ որք ստանային զլիւլի սնունդ, այլիք՝ Թուշմալեանց, Փիրատեանց, Պապանեան, Նազարեան, Կուկուճանեանց, Կուպիկեան և Առաքելեան : Ի սոցանէ Պապանեանն արձակեցաւ ստանալով ըստ սահմանադրութեան խորհրդարանիս ամսական դրասն բուրջիս : Իսկ ի տեղի նորա ընկալեալ եղև այլին Սախարեան :

Բաց յայդոցիկ՝ Աղքատանոցն մատակարարեր զամական թոշակս կարի չքաւորաց ոմանց կանանց եօթանեցունց Սահարպէկեան, Սախարեան, Տէր Մոսկէսեան, Պապուրեան, Ալամսանեանց և Պապանեան. և առն միում Մուրատեանց անուանելոյ:

Աւուլմեական օժանդակութիւն տուաւ երկից անձանց, այն է՝ ուսանողի Վայսերական Համալսարանին Մոսկվայի Տէր Գասպարեանց, աշակերտուհւոյ 3-րդ Գիմնազիայի Սերերրակեանց, և Պետրոս-Պօղոսեան Գպրոցի (°) Խօճայեանց. վերջինս ըստ անական Հանգամանաց ծնօղացն արձակեալ ի Գպրոցէն զադարեցաւ ի ստացմանէ օժանդակութեանն: Ըստ այսմ՝ ի 1875 ամի անձինք տասըն և ինն ստացան յԱղքատանոցէն զսնունդ, թոշակ և զօժանդակութիւն: Անձինք քանիք ևս յազգայնոց ճանապարհորդաց օժազայեցան յԱղքատանոցի քանի աւուրբք և ընկալան զբաւականութիւն կարեւոր պիտոյից իւրեանց՝ և երկուքն զզրամական նպաստ:

Ի միում ի սենեկաց զետեղեցաւ կիրակօրնական Գպրոցն ութից մանկանց եղելոց աստ ի Վովկասեան զաւառաց յուսումն արհեստից:

Բ. — Ի գանձարանի Աղքատանոցի մնացին առ 1 Յունվարի 1875 ամի տոկոսաբեր թուղթք՝ որք մանրամասն յիշատակին ի հաշուեցուցակին՝ և Ըուր. Պոսպատրաստի զրամք 56,486 66

Աւելան յընթացս տարւոյն տոկոսիք նոցին և նուէրք 2,700 60

59,187 26

Ծախք եղեն

Վառելիախալի, ըուսաւորութեան և ապահովութեան ի հրդեհէ. 895 62

Ի սնունդ Աղքատաց. 1,004 79

Ի նորոգութիւն անցազրոց նոցին 5 33

Ի ոռձիկ քարտուղարի խորհրդարանին ի հրատարակութիւն յայտա-

րարութեանց, ի գին մատենից խորհրդարանի, դիւանական պիտոյից սուբհանդակի և ոստիկանոցի. 148 97

2,054 51

Օժանդակութիւն արտաքոյ Աղքատանոցի. ճանապարհորդաց միանուագ նպաստ 28
Թոշակ անկար կանանց և Մուրատեանցի 970

998

Նպաստ միոյ ուսանողի և երկուց աշակերտուհեաց 255

Գումարն Համայն 3307 51

Ի բաց առեալ զվերտողեալ ծախսըն՝ մնաց առ 1 Յունվարի 1876 ամի տոկոսաբեր թուղթք և պատրաստի զրամք 55879 75

Գ. — Հաշուագրութիւն 1875 ամի Հանդերձ յաւելուածովք առ 1 Յունվարի 1876 ամի մայր զըրամագլխովք և վերաբերեալ նմին տոկոսաբեր թղթովքի համաձայն 10 յօդ. կարգադրութեան առաջարկեցաւ ի վերազննութիւն Հայազգի բընակչաց Մոսկվայի ի ժողովի կազմելոյ ի 25 անցելում Մարտի ամսոյ, որ ի ձեռն ընտրեալ ի ժողովոյն երկից անգամոց երեւեցաւ ըստ ամենայն մասանցն օրինաւոր, և զրամագլուխն առ ձեռն և անթերի, ուստի և կազմեցաւ օրագրութիւն ժողովոյն ստորագրութեամբ ներկայ գտեալ անգամոց հասարակութեան:

Գ. — Հայազգի հասարակութիւն Մոսկվայի ի համագումար ժողովի կազմելոյ ի 12 Դեկտեմբերի անցելոյ ամի՝ միաձայն հաւանութեամբ ընտրեաց ատենակալ անդամ ի տեղի հանգուցեալ Աւագ քահանային Վեօբէեանց զԱւագ քահանայն Յակոբ Սուրէնեանց:

Եւ զի յանցելումն ամի հրաժարեցաւ ի պաշտօնէ ի պատճառս տնական հանգամանաց իւրոց

անդամ խորհրդարանի Պատուամեծար քաղաքացի Միքայէլ Յարութիւնեան Ստեփանեան, ուստի և հասարակութիւնն ի նոյն իսկ ժողովի ընտրեաց ի տեղի նորա զժամանակաւոր Ա. կարգի վաճառական Մոսկվայի զՍարգիս Գալստեան Զանուժեանց, զոր և հաստատեաց խորհրդարանս:

Հետեւեալքն եւս նոր-նախիջեւանի Հայոց Մարդասիրական ընկերութեան Հոգաբարձական Խորհրդարանի հաշիւն եւ կարգադրութիւնն է, զոր եւ ըստ սովորականին կհրատարակեմք ի գիտութիւն մերազնէից:

Հ Ա Հ Ի Ի

ՀՈԳԱՐԱՐԶԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ
ՄԱՐԳԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՀԱՅՈՑ ՆՈՐ - ՆԱԽԻՋԵՒԱՆԻ
ՎԱՍՆ 1875 ԱՄԻ

Խորհրդարանս Հոգաբարձուաց ընկերութեանս համաձայն ժե. յողուածոյ կանոնադրութեան իւրոյ պատիւ ունի առաջի առնել Գերյարդոյ Անդամոց ընդհանուր ժողովոյս անցեալ 1875 ամի տարեկան հաշիւը, յորում բացայայտ կտեսնուին որպէս ընկերութեանս իւր սեպհական մուտքն ու ելքը, նոյնպէս և իւր հոգանաւորութեան ներքոյ գտնուած Ս. Խաչ վանուց ժառանգաւորաց զրպրոցի եկամուտքն ու ծախքը՝ և ընկերութեանս առ 1 ն Յունվարի 1876 տարւոյս ունեցած կարողութիւնը:

Ինչպէս կերևի հաշուեմատենէն, ընկերութիւնըս իսկզբան 1875 ամին ունէր զբամազուիս ի նախընթաց ամաց յաւելեալ 10564 ր. 90 կ.

Յընթացս 1875 ամի եղեալ են մուտք

Բ. Կ.

Ա. — Ի 203 անդամոց տարեկան բաժանորդագինք	1218
Բ. — Ի 6 նախանձաւոր անդամոց բաժանորդագինք	36

Գ. — ՅԱԳՔԻՐՈՒՆԵՆԵԱՆԿ ՄԻՔԱՅԷԼԻ յիշատակ հոգւոյ հանգուցեալ բարեբարին իւրոյ Առաքելի Գուշնարեանց միանուագ.

120

Դ. — ԸՍՏԿՍԱԿՎԱՆԱՆԳՈՒԹԵԱՆ ՀԱՆԳՈՒԳԵԱԼ ՌԱԿԱՅԷԼԻ ՏԷՐ ԳԱՐՐԻԷԼԵԱՆ ՓՈՔՈՎ ընկալեալ է ի Բարեգործական ընկերութենէն.

850

Ե. — Ի տարեկան սովոսեաց 18 սոմսակաց արքունի դրամատան և ներքին փոխառութեանց

90

Զ. — Ի սովոսեաց առ ձեռն պատրաստի դրամոց ընկերութեանս շահելոց ի ձեռն գանձապահի սորին և ի վաճառաշահութենէն :

538

Է. — Ի Պ. ՄԿՐՏՅԷ ՍԱՆԱՍԱՐԵԱՆԿ ընծայաբերեալ ի պէտս կարևոր պակասութեանց ժառանգաւորաց Գպրոցին.

400

Ը. — Ի ՏԷՐ ԽԱՀԱՏՈՒՐ քահանայէ Գասպարեան նուիրեալ ի նոյն պէտս:

25

Թ. — Ի զին գրենոյ թոշակաւոր աշակերտաց Գպրոցիս

66 85

Ժ. — Ի վաճառմանէ աւելորդ կաւրահաց

7

ԺԱ. — Ի Զմրուխտ տիկնոջէ նախնական հանդերձագին միոյ աշակերտի

30

ԺԲ. — Ի վարձուց թոշակաւոր աշակերտաց

1477 50

ԺԳ. — Ի Կառավարչէ վանուց սնունդադրամ վասն ձրիավոր շահերտաց և միաբանից Ս. Խաչի վանուցս

600

Մտից զուժարն է 5458 35

Իսկ հանդերձ յաւելուածովքն անցելոց ամաց մտից զուժարն է

16023 25

Ծախք յընթացս 1875 ամի են

Ա. — Ի ոռճիկ ուսուցչաց	1427 46
Բ. — Ի սնունդ աշակերտաց և միաբանից վանուցն	1247 56